**600.0037.31.08.01**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

31 օգոստոսի 2001 թվականի №37
ք. Երևան

## «Շինարար» արտադրական կոոպերատիվի «Ամրակից-1» և «Ամրակից-2» փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և 59-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Լոռվա մարզի «Ամրակից-Կամենկա» ջրատարի վրա կառուցված՝ «Շինարար» արտադրական կոոպերատիվի փոքր ՀԷԿ-երի 1-ին և 2-րդ հերթերից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 12.155 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 10.129 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

2. «Շինարար» արտադրական կոոպերատիվի փոքր ՀԷԿ-երի 1-ին և 2-րդ հերթերից առաքվող էլեկտրական էներգիայի 2001 թվականի քվոտան սահմանել 5.189 մլն կՎտժ:

3. Հանձնարարել «Շինարար» արտադրական կոոպերատիվին՝ եռամսյա ժամկետում իրավասու կազմակերպությունների միջոցով ուսումնասիրել ՀԷԿ-երի նախագծերից փաստացի տեխնիկական ցուցանիշների էական շեղումների պատճառները, կազմել նախագծային տեխնիկական ցուցանիշներին հանգելու համար անհրաժեշտ

միջոցառումների ցանկ ու ժամանակացույց, գնահատել դրանց իրագործման համար պահանջվող ծախսերը և արդյունքները ներկայացնել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի քննարկմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հոկտեմբերի 1-ից:

**ՀՀ էներգետիկայի կարգավորող**
**հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Գրիգորյան**